

---

---

*Das Deutsche Reich und der Völkermord an den Armeniern, herausgegeben von Rolf Hosfeld und Christin Pschichholz, Göttingen, Wallstein Verlag, 2017, 320 S.*

*Գերմանական կայսրությունը և Հայոց ցեղասպանությունը, հրատարակության պատրաստեցին Ռոլֆ Հոսֆելդը և Քրիստին Պշիխոլցի, Գյոթինգեն, «Վալշտայն» հրատարակչություն, 2017, 320 էջ*

Հայոց ցեղասպանությանը, Առաջին աշխարհամարտի տարիներին գերմանա-օսմանյան դաշինքին և Գերմանիայի համապատասխանատվությանը վերաբերող ուսումնասիրությունները շնորհիվ Լեփսիուսի տան տնօրեն դր. Ռոլֆ Հոսֆելդի և գիտաշխատող դր. Քրիստին Պշիխոլցի ջանքերի կարևոր համալրում ունեցան: Նրանց հրատարակած գիտական հոդվածների սույն ժողովածուն ոչ միայն ի մի է բերում նշված թեմաներին վերաբերող կարևորագույն ձեռքբերումները, այլև հանգամանալից անդրադարձ է դեռևս սպառնիչ ու համակողմանի լուսաբանում չստացած բազմաթիվ հիմնախնդիրներ: Չնայած հեղինակները Լեփսիուսի տան՝ 2015 թ. մարտին Բեռլինում կազմակերպած «Հարյուրամյակի ոճրագործության վկաները. գերմանական կայսրությունը և Հայոց ցեղասպանությունը» միջազգային գիտաժողովի մասնակիցներն են, այդուհանդերձ այս ժողովածուում զետեղված հոդվածները չեն նույնանում այնտեղ ներկայացված զեկուցումների հետ, քանի որ դրանց մի մասը մասամբ այլ թեմաների վերաբերող ուսումնասիրություններ են, իսկ մյուս մասը՝ բովանդակային և ծավալային ավելի մեծ ընդգրկում ունի:

Ժողովածուում ընդգրկված 13 հոդվածները ըստ թեմատիկ բովանդակության խմբավորված են չորս բաժնում: Առաջին՝ «Հայոց ցեղասպանությունը. համատեքստ, վճռման գործընթացներ, քննարկումներ» բաժնում Մեծ Բրիտանիայի Մաութհեմֆրոնի համալսարանի դասախոս Մարկ Լևենեն «Մահացու աշխարհաքաղաքականությունը, էթնիկական մոբիլիզացիան և ժողովուրդների խոցելիությունը 1914-1918 թթ.» հոդվածում հանգամանալից քննության է ենթարկում Առաջին աշխարհամարտի մասնակից պետությունների հետապնդած աշխարհաքաղաքական շահերը, դրանց ներհակությունները և անդրադառնալով հայերի, հրեաների ու հույների պատմական ճակատագրին՝ ուշագրավ գուզահեռներ է անցկացնում դրանց միջև: Հեղինակը, դիտարկելով հետպատերազմյան, մասնավորապես Փարիզյան վեհաժողովի, Սևրի, ապա Լոզանի պայմանագրերի հետ կապված իրադարձությունները, ի ցույց է դնում եվրոպական տերությունների՝ կեղծ մարդասիրության քողի ներքո իրականացրած եսապաշտական քաղաքականությունը,

որն իր տխրահռչակ հետևանքներով դարձավ «Առաջին աշխարհամարտի ճակատագրական կտակը»՝ անտեսելով ոճրագործությունը պատժելու և ցեղասպանության ենթարկված հայ ժողովրդին հատուցում տրամադրելու իրավական կողմը: «Այն, թե որքան վերջնական էր այդ կտակը,– նշում է Լևենեն,– ամբողջ հստակությամբ որոշակի դարձավ դաշնակիցների և արդեն իրավականորեն ճանաչված անկախ Թուրքիայի միջև կնքված Լոզանի պայմանագրի տեքստում: Քանի որ այն ո՛չ «Հայաստան» և ո՛չ «էլ հայ» բառերն էր պարունակում, ստեղծում էր այնպիսի տպավորություն, կարծես Հայկական հարցը կամ անգամ հայ ժողովուրդը դադարել էին գոյություն ունենալուց» (էջ 39):

Հաջորդ՝ «Պատերազմը, մեծ տերությունները և ցեղասպանության սկզբնավորումը» հոդվածը պատկանում է սոցիոլոգիայի և քաղաքագիտության պրոֆեսոր, Միչիգանի համալսարանի Այզենբերգի ինստիտուտի տնօրեն Ռոնալդ Գրիգոր Սունիի գրչին: Նա պարզաբանում է Առաջին աշխարհամարտին Օսմանյան կայսրության ներգրավման գլխավոր շարժառիթները, ինչպես նաև այն նպատակները, որոնց ձգտում էր հասնել երիտթուրքական կառավարությունը պատերազմի ընթացքում: Բացահայտելով հայ հեղափոխականների հակապետական գործողությունների վերաբերյալ թուրքական շահարկումների քաղաքական նպատակները՝ հեղինակը Հայոց ցեղասպանությունը դիտարկում է Թուրքիան միաէթնոս երկրի վերածելու և միաժամանակ նրա սահմաններն ավելի ընդլայնելու՝ աշխարհամարտի բռնկումից դեռևս տարիներ առաջ խնամքով մշակված երիտթուրքական կառավարության ծրագրի և դա պետական քաղաքականության վերածելու համատեքստում: Միաժամանակ նա իր համերաշխությունն է հայտնում պատմագիտության մեջ անառարկելի այն տեսակետին, որ եթե պատերազմի բռնկումը մեկ-երկու տարով հետաձգվեր, և հայկական բարենորոգումներն Օսմանյան կայսրության արևելյան նահանգներում գեթ մասնակիորեն կյանքի կոչվեին, ապա այդ վայրերում հայերի հետապնդումները, տեղահանությունն ու աքսորը այդքան դյուրին չէին իրականացվի: Պարզաբանելով պատերազմի սկզբում ռուս-թուրքական ճակատում տեղի ունեցած իրադարձությունները՝ հոդվածագիրը քննադատաբար է անդրադառնում հայերի տեղահանությունն ու նրանց հանդեպ բռնությունները պատերազմական դրդապատճառներով մեկնաբանելու փորձերին (էջ 66):

Սունիի հոդվածին հաջորդում է Քլարկի համալսարանի՝ Հոլոքոստի և ցեղասպանագիտական ուսումնասիրությունների աշխատակից Թաներ Աքչամի «Ըմբռնել հայերի ցեղասպանությունը. մակրոհեռանկարի փորձ» ուսումնասիրությունը, որտեղ քննության է ենթարկվում արտերկրում առավել ընդունված այն ըմբռնումը, թե Հայոց ցեղասպանությունը տեղի է ունեցել 1915-1918 թվականներին: Հակադրվելով դրան՝ հեղինակը պնդում է, որ Հայոց ցեղասպանությունը իրականում եղել է տևական գործընթաց, որի երեք հիմնական բաղկացուցիչներն են՝ 1890-ական թթ. համիդյան ջարդերը,

1909 թ. Ադանայի կոտորածը և Առաջին աշխարհամարտի տարիներին հայերի զանգվածային բնաջնջումը: Դեռևս Բեռլինյան հիշյալ գիտաժողովում Աքչամի այս տեսակետը հարուցեց տարակարծություններ: Նրան առանձնապես կրքոտ առարկեց Սունին՝ նշելով, թե Հայոց ցեղասպանությունը ներառում է 1915-1918 թթ. իրադարձությունները, իսկ դրանց նախորդած այլ նախադրյալները հարկ է պարզապես բնութագրել իբրև կոտորածներ: Անշուշտ այստեղ գործ ունենք երկու տարբեր հայեցակարգերի հետ: Քաղաքագիտական առումով վերջինիս տեսակետը կարող է տրամաբանական համարվել, քանի որ Հայոց ցեղասպանությունը համեմատաբար ընդարձակ ժամանակահատվածում ընդգրկելու պարագայում իրավաքաղաքական առումով հնարավոր է, որ այն զրկվի որոշակիությունից: Պատմագիտական տեսանկյունից, սակայն, Աքչամն անշուշտ իրավացի է, երբ Հայոց ցեղասպանության մեջ ընդգրկում է նաև Մեծ եղեռնին նախորդած կոտորածները:

Ժողովածուի առաջին բաժինը եզրափակում է Լայդենի համալսարանի պրոֆեսոր Էրիկ-Յան Ցյուրխերի՝ «1913-1915 թթ. երիտթուրքական որոշումը որպես օրինակ» հոդվածը: Քանի որ հայերի տեղահանությանը և հատկապես բնաջնջմանն առնչվող որոշումների փաստաթղթերը դեռևս լիովին չեն գաղտնագերծվել և հավանաբար երբևէ չեն բացահայտվի, հեղինակը փորձում է այդ որոշումների գործընթացի վրա հնարավորինս լույս սփռել՝ ուսումնասիրելով երիտթուրքական կառավարության՝ նույն ժամանակամիջոցին վերաբերող և հեռահար նպատակներ հետապնդող բավականաչափ պահպանված որոշումները: Քննարկվել են հատկապես այն չորս հիմնական որոշումները, որոնք վերաբերում են 1913 թ. հունվարի պետական հեղաշրջմանը, 1914 թ. հունիսին Էզեյան ծովի առափնյա շրջաններից ուղղափառ հույների արտաքսմանը, 1914 թ. օգոստոսին Գերմանիայի հետ դաշնակցային պայմանագրի ստորագրմանը և 1914 թ. հոկտեմբերին ռուսական նավատորմի վրա հարձակմանը, ինչը փաստացիորեն ազդարարեց Օսմանյան պետության ներքաշվելը պատերազմի մեջ:

Հեղինակն անդրադառնում է այդ իրադարձությունների վերաբերյալ որոշումների ընդունմանն առնչվող մի շարք էական հատկանիշների, որոնք, ըստ նրա, նպաստել են հայերի տեղահանության և բնաջնջման վճռի ընդունմանը: Միաժամանակ, այդ վճիռն ընդունելու վրա ավելի կամ նվազ ազդեցություն ունեցած իրադարձությունների վերլուծությանը զուգահեռ՝ նա քննության է ենթարկում Բեհաեդդին Շաքիրին և երիտթուրք այլ պարագլուխներին վերաբերող մի շարք ուշագրավ փաստեր, որոնք ևս զգալի որոշակիություն են տալիս Հայոց ցեղասպանության վճռին հանգելու գործընթացին և մասնավորապես դրա որոշակի ժամանակահատվածին՝ ամբողջացնելով այդ հարցում նաև տվյալ պարագլուխների ունեցած դերակատարությունը:

Ժողովածուի՝ «Ռազմական դաշինքը և ցեղասպանությունը. գերմանացի դիվանագետներն ու զինվորականները» խորագիրը կրող երկրորդ բաժինը

սկսվում է Նյուքասթլի (Ավստրալիա) Բռնությունների պատմության կենտրոնի և Յյուրիխի համալսարանի դոկտորանտ Թոմաս Շմոլցի «Գերմանական դիվանագիտությունը և հայկական բարենորոգումների ծրագրերը 1913-1914 թթ.» հոդվածով, որտեղ հանգամանալից անդրադարձ է կատարվում Հայկական հարցի և միջազգային դիվանագիտության ասպարեզում բարենորոգումների հետ կապված զարգացումների պատմությանը: Իրատեսորեն պարզաբանվում են տարածաշրջանային պետությունների, մասնավորապես Գերմանիայի և Ռուսաստանի հետապնդած քաղաքական շահերը և դրանցում առկա հակասությունները, որոնք, ինչպես նշում է հոդվածագիրը, պարզորոշ դրսևորվում էին բարենորոգումների շուրջ բանակցություններում: Կարևոր է, որ միանգամայն ստույգ է ներկայացված բարենորոգումների հանդեպ Գերմանիայի և մասնավորապես Կ. Պոլսում նրա դեսպանի որդեգրած դիրքորոշումը՝ բանակցային գործընթացին զուգահեռ ի հայտ եկած փոփոխություններով հանդերձ:

Շմոլցը չի թերացել քննարկելու նաև բարենորոգումների՝ Մանդեշտամի ներկայացրած նախագծի և փոխհամաձայնեցված վերջնական ծրագրի միջև առկա տարբերությունները: Հոդվածը անկասկած կշահեր, եթե դրանում ավելի մեծ տեղ հատկացվեր բարենորոգումների հարցի հանդեպ հայկական կողմի դիրքորոշմանը և նախաձեռնություններին, որոնք սուկ հպանցիկ են ներկայացված: Այդուհանդերձ, հարկ է գնահատանքով նշել, որ հեղինակը համեմատաբար սեղմ ծավալում հարցը լուսաբանել է առանց տուրք տալու արտերկրի պատմագիտության մեջ երբեմն հանդես եկող կարծրատիպերին:

Յյուրիխի համալսարանի պրոֆեսոր Հանս-Լուկաս Կիզերն իր՝ «Դեսպան Վանգենհայմը և երիտթուրքական կոմիտեն. կիսասիրտ՝ խաղաղության քաղաքականություն, պատերազմի շեշտակի հույս և բարոյական պարտվողականություն (1913-1915 թթ.)» հոդվածում փորձում է եղերական իրադարձությունները դիտարկել Կ. Պոլսում Գերմանիայի դեսպան Հանս Վանգենհայմի՝ որպես դիվանագետի և մարդու տեսանկյունից և ի հայտ բերել նրա դիրքորոշման մեջ առկա հակասությունները: Ներկայացնելով հայկական բարենորոգումների քննարկման ժամանակաշրջանում Վանգենհայմի դերը և պարզաբանելով նրա դիրքորոշման փոփոխությունների շարժառիթները՝ հեղինակն իրատեսորեն նշում է, որ պատերազմի բռնկումից հետո թե՛ բարեփոխումները և թե՛ հայերի ու Օսմանյան պետության քրիստոնյա այլ հպատակների ճակատագիրը բացարձակապես չէին հետաքրքրում դեսպանին, որն արդեն լծված էր գերմանա-թուրքական դաշինքին, մինչև իսկ լի էր թուրքական ցեղասպան քաղաքականության հանդեպ լիակատար հանդուրժողականությամբ: Ավելին, առնվազն մինչև 1915 թ. հուլիսը, տուրք տալով հայերի տեղահանության ու վերաբնակեցման «ռազմական դրդապատճառների» վերաբերյալ թուրքական պաշտոնական ստահող քարոզչությանը և այն փոխանցելով պաշտոնական Գերմանիային,

նա որոշակի դերակատարություն է ունեցել Հայոց ցեղասպանության հանդեպ իր երկրի կառավարության հանդուրժողականության ձևավորման հարցում: Իսկ այդ առնչությամբ այն ամուլ առարկությունները, որոնք նա ներկայացնում էր Բ. Դռանը, թելադրված էին բացառապես հետագայում Գերմանիայի մեղսակցությունը կոծկելու մտահոգությամբ: Վանգենհայմի գործունեության և գործելակերպի քննությամբ հեղինակն ըստ ամենայնի բացահայտում է այն բարոյական սնանկությունը, որում հայտնվել էին թե՛ նա և թե՛ գերմանական կառավարությունը պատերազմի բռնկումից հետո:

Հաջորդ «Գերմանացի զինվորականները և հայերը 1835-1916 թթ. ժողովրդագրական հայեցակարգեր, անվտանգության միջոցառումներ և խճողումներ» հոդվածը պատկանում է Բեռնի համալսարանի դասախոս Կարլ Ալեքսանդր Կրեթլովին: Իրավամբ ընդգծելով, որ Օսմանյան պետությունում զետեղված գերմանացի զինվորականների և Հայոց ցեղասպանության առնչությունները դեռևս համակազային ուսումնասիրության չեն ենթարկվել, հեղինակը դա բացատրում է ոչ միայն սկզբնաղբյուրների սակավությամբ և համապատասխան արխիվներում աշխատելու խոչընդոտներով, այլև այն հանգամանքով, որ պատմագիտությունը դեռևս բավականաչափ ցանկություն չի դրսևորել Առաջին աշխարհամարտի տարիներին Օսմանյան կայսրությունում գերմանական զինվորականության դերակատարությունը լուսաբանելու հարցում:

Հոդվածագիրը քննական անդրադարձ է կատարում գերմանական բարձրաստիճան զինվորականների՝ հայերի հետ ունեցած ուղղակի և անուղղակի առնչություններին: Ուշագրավ պարզաբանումներ են կատարվում Գերմանիայում ժամանակին մեծ համբավ վայելող գեներալ Մոլտկեի (1800-1891) մասին, որը 1835-1839 թթ. զբաղվել է օսմանյան զինված ուժերի բարեփոխմամբ և արդիականացմամբ: Քաջատեղյակ լինելով օսմանյան իրականությանը նա բացասաբար է արտահայտվել օսմանյան հասարակության վերաբերյալ, մինչդեռ հայերի մասին նրա կարծիքները միանշանակ դրական էին: Մոլտկեն հայերին համարում էր Օսմանյան պետության սյուներից մեկը, հիացած էր նրանց ջանասիրությամբ ու մշակութային ձեռքբերումներով, օսմանյան հասարակության մեջ առավել լավ ինտեգրելու համար պնդում էր ստեղծել հայկական գումարտակներ ու դրանք ընդգկել օսմանյան զորամասերում, ինչը տարբեր պատճառաբանություններով սուլթան Մահմուդ II-ը չի ընդունել:

Ցավոք, սակայն, ինչպես նշում է հեղինակը, 1883 թ. Օսմանյան կայսրություն ուղարկված ռազմական առաքելության ղեկավար Կոլմար ֆոն դեր Գոլթցը (1843-1916) չորդեգրեց Մոլտկեի մոտեցումները, այլ, ընդհակառակը, հայերին համարում էր Օսմանյան պետության հակառակորդ Ռուսաստանի համակիրներ, որոնք կարող էին զինված ապստամբությամբ պետական հեղաշրջում իրականացնել: Ընդ որում Գոլթցն իր այդ տեսակետը շարունակ ներկայացնում էր գերմանական գլխավոր շտաբին, գերմանական սպանե-

րին ու դիվանագետներին՝ նպաստելով մասնավորապես շտաբում բացասական կարծիքի ձևավորմանը: Նա միաժամանակ սուլթանին հորդորում էր անխնա լինել հայերի հանդեպ և նրանց ապստամբության ցանկացած փորձ սաղմի մեջ խեղդել, ուստի, ինչպես հողվածագիրն է նշում, 1894-1896 թթ. հայկական կոտորածները ոչ այլ ինչ էին, քան նրա խորհուրդների իրականացում: Ուշագրավ է, որ Գոլթը, որը գուցե սկզբունքորեն հայ բնակչության հանդեպ այդօրինակ հաշվեհարդարի կողմնակիցներից չէր, իր անձնական նամակներում հայկական կոտորածները դատապարտում էր, սակայն բացահայտորեն դրանց դեմ հանդես չէր գալիս:

Հողվածագիրն ուշագրավ դիտարկումներ է կատարում նաև Առաջին աշխարհամարտի տարիներին գերմանացի բարձրաստիճան գինվորականների՝ հայկական խնդրին ունեցած առնչություններին՝ իրատեսորեն ներկայացնելով նրանց ցուցաբերած ուղղակի և անուղղակի աջակցությունը հայերի տեղահանմանն ու բնաջնջմանը:

Բաժինը եզրափակվում է Նյու Յորքի Կոռնելի համալսարանի պրոֆեսոր Իգարբել Հյուլի «Գերմանացի գինվորականները և Հայոց ցեղասպանությունը» հողվածով, որը, թեմատիկ էական աղերսներ ունենալով նախորդիվ հիշատակված նյութի հետ, ոչ միայն չի կրկնում այն, այլև թեման լուսաբանում է բոլորովին այլ կտրվածքով: Օսմանյան պետությունում գործող գերմանական ռազմական առաքելությանը, դրա ղեկավար Օտտո Լիման ֆոն Մանդերսին, թուրքական բանակի գլխավոր շտաբի պետ Բրոնսարտ ֆոն Շելենդորֆին, գեներալ Գոլթին, կապիտան Հանս Հումանին և մի շարք այլ սպաների վերաբերող քննական դիտարկումներում հեղինակը փորձում է խորամուխ լինել նրանցից յուրաքանչյուրի՝ հայերի հետ ունեցած առնչություններում՝ առանձնացնելով և բնութագրելով նրանց դիրքորոշումներն ու դերակատարությունը Հայոց ցեղասպանության հարցում: Երիտթուրքական կառավարության հայաջինջ քաղաքականությանը ցուցաբերած առավել ակտիվ աջակցությամբ, ըստ հեղինակի, առանձնանում էին Շելենդորֆը և Հումանը, որոնցից առաջինը, ողջունելով հայերի տեղահանությունը և նաև որոշ հրամաններով աջակցելով դրան, մինչև իսկ զլացել է աքաղից խնայել Բաղդադի երկաթգծի կառուցմանը մասնակից հայերին՝ հակառակ մի շարք գերմանացի պաշտոնյաների խնդրանքներին: Երկրորդը, որը թուրքական և գերմանական կառավարությունների հետ սերտ կապեր ուներ, հայերի բնաջնջումը բացեիբաց ողջունել է՝ բառացիորեն ասելով՝ «Դա դաժան է, բայց օգտակար» (էջ 200):

Հեղինակը կարևոր փաստերով արժեքավոր բացահայտումներ է կատարում նաև գերմանացի այլ բարձրաստիճան սպաների վերաբերյալ՝ միաժամանակ ընդգծելով, որ միջին և ցածր աստիճանների սպաները՝ որոշ բացառություններով, չէին մասնակցում ցեղասպան գործողություններին, ինչի պատճառը Գերմանիան մեղսակցության մեղադրանքներից զերծ պահելն էր: Նա հանգամանալից անդրադարձ է կատարում նաև հայերի տեղահանու-

թյան՝ թուրքական պաշտոնական «հիմնավորումներին» և հայերի բնա-  
ջնջման հարցում երբեմն ի հայտ եկող գերմանական դիվանագիտական  
առարկություններին՝ ըստ ամենայնի լուսաբանելով դրանց քաղաքական  
դրդապատճառը:

Ժողովածուի երրորդ բաժինը, որը կրում է «Մարդու իրավունքների  
խնդիր. մարդասիրական նախաձեռնություններ և դիմադրություն» խորագի-  
րը, սկսվում է տողերիս հեղինակի և դր. Ռոլֆ Հոսֆելդի համահեղինակու-  
թյամբ շարադրված՝ «Յոհաննես Լեփսիուսը և Հայկական հարցը Աշխարհա-  
մարտի իրադրությունում» հոդվածով: Ներկայացնելով Լեփսիուսի՝ իբրև  
հզոր անհատականության և մարդասերի ձևավորման ու զարգացման ուղին  
և հանգամանալից անդրադարձ կատարելով նրա՝ դեռևս 1895 թվականից  
սկզբնավորված հայանվեր բազմակողմանի գործունեությանը, հեղինակները  
դա դիտարկում են տարածաշրջանում Գերմանիայի և այլ տերությունների  
վարած քաղաքականության, հատվող շահերի համատեքստում՝ այդպիսով ի  
ցույց հանելով նաև այն վտանգները, խոչընդոտներն ու արգելքները, որոնք  
վիճակված էին նրան իր հայանվեր առաքելության գործում: Հանգամանալից  
լուսաբանվում են այն ջանքերն ու նախաձեռնությունները, որոնք Լեփսիու-  
սը հանդես բերեց իր համար առանձնապես աննպաստ՝ Առաջին աշխարհա-  
մարտի պայմաններում գերմանական հասարակայնությանը հայերի իրավի-  
ճակի վերաբերյալ իրազեկելու, ոճրագործությունները հրապարակայնացնե-  
լու և Հայոց ցեղասպանության հանդեպ իր կառավարության հանդուրժո-  
ղական քաղաքականությունը փոխելու համար: Մի շարք արժեքավոր և  
ուշագրավ մանրամասներով են ներկայացվում, մասնավորապես, 1915 թ.  
ամռանը նրա՝ Կոստանդնուպոլիս կատարած ճանապարհորդությունը և  
ռազմական նախարար Էնվերի հետ ունեցած հանդիպումը, ինչպես նաև նրա  
բախումը կառավարության՝ Հայկական հարցի շուրջ մինչև պատերազմի  
ավարտը լուրջուն պահպանելուն վերաբերող պահանջի և ռազմական  
գրաքննության հետ, որի հարուցած արգելքները հաղթահարելու ճանապար-  
հին նա ստիպված էր հրաժարվել ոչ միայն իր աշխատանքից և ապրուստի  
բոլոր միջոցներից, այլև տարագրվել իր փրկարար առաքելությունը շարու-  
նակելով չեզոք արտերկրում:

Հոդվածում միաժամանակ պարզաբանվում են հայ գործիչների հետ  
Լեփսիուսի ունեցած առնչությունները և նրանց համագործակցության  
բնույթն ու ուղղվածությունը: Անդրադարձ է կատարվում նաև նրա հասա-  
րակա՝ քաղաքական, մարդասիրական և հրապարակախոսական բազմա-  
շերտ հայանվեր գործունեության առանձին ոլորտներին ու դրա հիմնական  
արդյունքներին:

Բաժնի եզրափակիչ՝ «Մարդասիրական դիմադրություն հայերի ցեղա-  
սպանության դեմ Հալեպում» հոդվածում պատմաբան Հիլմար Կաիզերը  
լուսաբանում է Մեծ եղեռնի առաջին ամիսներին դեպի անապատ քշվող հա-  
յերի վերջին հանգրվան Հալեպում ի հայտ եկած փրկարար նախաձեռ-

նությունները: Ամփոփ ներկայացնելով ցեղասպանության ենթարկվող հայ ժողովրդի օրհասական ծանր դրությունը՝ նա առավել հանգամանալից անդրադարձ է կատարում, մասնավորապես, Հալեպի գերմանական համայնքի՝ հայերին նյութական օգնություն ցուցաբերելու փորձերին, հայ քահանաներ Ահարոն Շիրաջյանի և Հովհաննես Էսքիջյանի հիմնած որբանոցներին և միսիոներուհիներ Բեատրիցե Ռոհների ու Պատուլա Շեֆերի ծավալած որբախնամ գործունեությանը: Հեղինակը չի թերացել պարզաբանելու նաև այն ջանքերը, որ վերոնշյալ անհատներն ու նրանց օգնականները գործադրում էին իրենց աշխատանքի հանդեպ թուրքական իշխանությունների շրջանում հանդուրժողականություն ձևավորելու համար: Եթե դա սկզբնապես նրանց հաջողվում էր, այդուհանդերձ տևական լինել չէր կարող, քանի որ թուրքական ցեղասպան քաղաքականությունը վերապահություններ չուներ, և 1917 թ. գարնանը նշված հաստատությունների որբերը նույնպես պիտի հանձնվեին իշխանություններին: Հողվածում արժեքավոր տեղեկություններ կան նաև այդ որբանոցների սաներին թուրքական զանազան հաստատություններում ցրելու և նրանց թուրքացնելու՝ կառավարության ձեռնարկած քայլերի մասին:

Ժողովածուի չորրորդ՝ վերջին բաժինը կրում է «Գաղափարախոսություն, ազգաշինություն և ցեղասպանություն. էթնիկական բռնության գերմանական ըմբռնումները» խորագիրը: Ք. Պշիխուլցը «Ձսպվածություն գաղութային պրագմատիզմի միջոցով. Գերմանիայի արևելյան քաղաքականության խոտանը և Հայոց ցեղասպանությունը» հոդվածում փաստելով, որ գերմանական կառավարությունն իր դիվանագետների միջոցով քաջատեղյակ էր թուրքական ցեղասպան քաղաքականությանը, ընդգծում է, որ նա ոչ միայն հակազդեց, այլև առնվազն մինչև պատերազմի ավարտն արգելեց այդ մասին քննարկումները և առհասարակ հայերի դրության մասին բարձրաձայնելը: Հերքելով հայերի տեղահանությունը ռազմական դրդապատճառներով պայմանավորող թուրքական քարոզչության տեսակետները, որոնք անքնին ընդօրինակվում և շրջանառության մեջ էին դրվում գերմանական կառավարության կողմից, նա այն ուշագրավ տեսակետն է զարգացնում, որ գերմանական կառավարության այսօրինակ վարքագիծը պայմանավորված էր ոչ միայն պատերազմական իրադրությունում օսմանյան դաշնակցին չվրդովելու ցանկությամբ, այլև իր հետպատերազմյան արևելյան քաղաքականության՝ տասնամյակներ ի վեր մշակվող հեռահար գաղութարար ծրագրերով: Պաշտոնական Գերմանիան հաղթական պատերազմից հետո դրանց իրականացման համար կարևորագույն նախադրյալ էր համարում թե՛ պատերազմի ընթացքում և թե՛ մասնավորապես դրանից հետո Օսմանյան պետության բացարձակ վստահությունը վայելելը, ինչը կնպաստեր Մերձավոր Արևելքի աստիճանական գաղութացման գերմանական ծրագրերի բարեհաջող իրականացմանը: Հեղինակը գտնում է, որ հայերի բնաջնջմամբ իրականացվող՝ Օսմանյան պետության ժողովրդագրական պատկերի հիմնովին



փոփոխումը, հայկական բարենորոգումներն օրակարգից ջնջելը, այդ կերպ բացառելով նաև տարածաշրջանում Ռուսաստանի քաղաքական ներթափանցման հնարավորությունը, Գերմանիայի կառավարությունը համարում էր օգտավետ գաղութացման իր ծրագրերը իրականացնելու ճանապարհին: Ըստ նրա՝ Հայոց ցեղասպանության հանդեպ վերջինիս բացարձակ հանդուրժողականությունը թելադրված էր նաև այդ հանգամանքով:

«Մաքս ֆոն Օպենհայմը և Արևելյան հարցի գաղափարական էթնիկացումը» հոդվածում պատմաբան և քաղաքագետ Մարկ Հանիշը լուսաբանում է օսմանյան IV բանակի կազմում ստեղծված՝ Արևելքով զբաղվող գերմանական լրատվական ծառայության ղեկավար Օպենհայմի գործունեությունը: Չնայած, որպես Հայոց ցեղասպանության ականատես, նա քաջատեղյակ էր թուրքական բնաջինջ քաղաքականության նպատակներին, այնուհանդերձ գերադասել է կապկել թուրքական պաշտոնական քարոզչությունը և այն անքննադատ տարածել: Հանգամանալից անդրադարձ կատարելով Օպենհայմի վաղ շրջանի, մասնավորապես 1896-1910 թթ. գործունեությանը, երբ նա ծառայում էր Կահիրեի գերմանական գլխավոր հյուպատոսությունում, հոդվածագիրը փաստում է, որ օսմանյան կառավարողների բռնության քաղաքականության հանդեպ նրա հանդուրժողական դիրքորոշումը միայն հայերի պարագայում և Առաջին աշխարհամարտի տարիներին չէ, որ երևան է եկել, այլ դա մշտապես առկա է եղել նրա՝ Կահիրեում գտնվելու ժամանակ, և նա նույն վարքագիծն է դրսևորել նաև այդ ժամանակաշրջանում քրիստոնյաների հանդեպ իրագործված հետապնդումների առնչությամբ: Ըստ այդմ, ինքնին հասկանալի է դառնում, թե գերմանական կառավարությունն Առաջին աշխարհամարտի տարիներին ինչ չափանիշներով էր ընտրում այն կադրերին, որոնք պետք է տեղակայվեին Օսմանյան կայսրությունում և ստանձնեին տեղեկատվական գործիքների ղեկավարումը:

Ժողովածուն եզրափակվում է Հաիֆայի համալսարանի պրոֆեսոր Ստեֆան Իրիզի՝ «Երբ քննարկվում էր ցեղասպանությունը. Թալեաթ փաշայի ահաբեկչությունը և գերմանական բանավեճը Հայոց ցեղասպանության մասին» հոդվածով, որտեղ ներկայացվում են Թալեաթի սպանությունից հետո Գերմանիայում ի հայտ եկած հրապարակային քննարկումները՝ ճիշտ և թյուր տեսակետներով հանդերձ: Նշելով, որ միմյանց հաջորդող ցեղասպանությունները ուղղակի կամ անուղղակի կապված են միմյանց, իսկ Հայոց ցեղասպանության և Հոլոքոստի միջև այդ կապը միանգամայն որոշակի է, հեղինակը քննադատաբար է անդրադառնում այն հանգամանքին, որ, չնայած Թալեթի սպանության առնչությամբ ի հայտ եկած կրքոտ արձագանքներին, այնուհանդերձ գերմանական հասարակայնության շրջանում միանշանակ ըմբռնում չի ձևավորվել հայերի նկատմամբ իրականացված ոճրագործությունների մասին: Մինչդեռ եթե դա առկա լիներ, ապա, ըստ հոդվածագրի, գերմանացի նացիստները չէին կարողանա Հոլոքոստն այդքան դյուրին և հաջողությամբ իրականացնել: Իրիզը քննական լուսաբանման է ենթար-

կում նաև Հայոց ցեղասպանության հարցում Գերմանիայի մեղքի և պատասխանատվության խնդիրը՝ փաստելով, որ հետպատերազմյան տարիներին շարունակ ձգտելով ձերբազատվել մեղքի և պատասխանատվության իր բաժնից, դրանով իսկ այն արդեն հող է նախապատրաստել հետագայում Հոլոքոստի սանձազերծման համար:

Սույն ժողովածուի գրեթե բոլոր հոդվածները հատկանշվում են քննության ենթակա հարցերի լուսաբանման առանձնահատուկ խորությամբ և բազմակողմանիությամբ, ուստի այն կարևոր և արժեքավոր ներդրում է պատմագիտության և ցեղասպանագիտության ասպարեզներում:

*ԱՇՈՏ ՀԱՅՐՈՒՆԻ*